524 Թող աղոթքս բարձրանա երկինք,

1. Թող աղոթքս բարձրանա երկինք,
Մատուցվի որպես պատարագ
Ու փռվի սուրբ ոտքերիդ տակ,
Որպես գոհություն իմ սրտի:

2. Թող պաշտեմ Քեզ խոնարհաբար,
Գրկեմ սուրբ ոտքերդ, իմ Տեր,
Սեղմեմ կրծքիս մեծ կարոտով,
Դրանք ինձ համար են խոցվել:

3. Թող անցնեմ այն ճանապարհով,
Որ խաչն ուսիդ անցար, իմ Տեր,
Սրտիդ ցավը անտեսելով՝
Ինձ համար ցանկացար մեռնել:

4. Թող, որ ինքս էլ խաչս առնեմ,
Գամ ետևիցդ, իմ Աստված,
Ես էլ Քեզ հետ խաչը ելնեմ,
Տեր, ուզում եմ Քեզ նմանվեմ:

5. Թող սովորեմ Քեզ պես ներել,
Քեզ նմանվել կուզեմ, իմ Տեր,
Անվերջ Քեզ գալ կուզեմ, իմ Տեր,
Սիրտս Քեզ շատ է կարոտել:

6. Ու երբ տեսա Քեզ խաչի վրա,
Ու սուրբ հայացքդ՝ ինձ ուղղած,
Լուռ մոտեցա, ծնկի իջա
Ու Քո Հոգով կենդանացա: